


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պիտի եւ ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԲԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեւել. ողջ դ. 80
, վեցամսեայ , 50
Օսար երկիրներ տարեկան Զրանք 25
, վեցամսեայ , 14
Թղթասարի ծախքը խմբագրու.
քեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա.
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՄԵՐ ՏԱՐԵՇՐԶԱՆԸ

Ամսնոյս 21ին, Փարոս իր տարե-
շրջանը լրացուց:

Դժուարութիւններով, զսհուղութիւննե-
րով և դառնութեամբ լեցուն տարի մը հա-
մակ, որոնց յաղթելու համար համբերու-
թեան ահագին պաշար մը սպառել հարկ
և դաւ մեղի:

Իբրեւ բարոյական գործ, ապահովապէս
լաւագոյն ընդունելութիւն մը չէինք կրնար
սպասել հասարակութենէ:

Փարոս՝ Եգիպտոսի հայոց զարգացեալ
մասին favori թերթը եղաւ. համակրու-
թեամբ չըլապատուած գտանք մենք զմեզ
թերթին հրատարակուած օրէն մինչև այս օր:

Բայց եթէ այս ձեռնարկը նիւթական
դործի տեսակէտով դիտելու ըլլանք, պէտք
է խոստովանինք թէ մեր թերթը փայլուն կա-
ցութիւն մը չունեցաւ:

Երկիր մը ուր մէկ գրաշար, մէկ խմբ-
բագիր և մէկ տպարան կայ, երկիր մը ուր
զարգացեալ անհատներ մատի վրայ կը համ-
բուին, ուր մարդիկ ռիսկալորութեան, նա-
խանձի և ատելութեան պիտի չկարգէին
կապուած են իրարու, ուր աղքատին
մարմինները բարբարոսի աչքով կը նային մա-
մուլին, ուր թերթը բաւականաչափ չի սպա-
ռիր իր ծախքերը գոցելու համար, և որով-
հետեւ ամեն խմբագիր Սրժնունի մը չէ որ
հազարաւոր ոսկիներ կարենայ ծախսել թեր-
թին գոյութիւնը ապահովելու համար, հե-
տեւեւ մեր ջանքերը և անձնագործութիւնը
բաւական չեղան այդպիսի դժուարութեանց
յաղթելու համար և փորձառութեամբ տե-
սանք որ այսպիսի պայմաններու տակ կարելի
չէր յարատեւել:

Այս վերջի երեք ամիսներուն մէջ Փարո-
սի անկանոն հրատարակութիւնը այս պատ-
ճառներէն զատ ուրիշ բանի չենք կրնար վե-
րագրել:

Եւ որովհետեւ այս պայտէս չի կրնար շա-
րունակուիլ, հիմնական բարեփոխման մը
պէտքը կը զգանք: Ուստի յառաջիկային՝ վե-
րապահելով Փարոսի մէկ տարուան մէջ կա-
տարած բարոյական դերին վրայ խօսիլ, կը
փութանք յայտարարել որ Փարոսի երկրորդ
տարեշրջանը սկսելէ առաջ հիմնական ինչ
ինչ կարգադրութիւններ անհրաժեշտ ըլլա-

լուն, ստիպուած ենք ժամանակ մը դադ-
րեցնել անոր հրատարակութիւնը՝ այդ ժա-
մանակամիջոցին մէջ պէտք եղած միջոցները
ձեռք առնելով՝ ապահովելու համար — եթէ
երբեք կարելի է — Եգիպտոսի այս միակ թեր-
թին կանխաւոր հրատարակութիւնը:

ԿԼԱՏԱԹԸՆ

Իռլանտայէ սկսեալ մինչև Հայաստան,
ամեն դժբաղդ, տառապող ազգերը սուգի
մէջ են կլատաթընի մահուամբ:

Մեծ ծերունին հոգին աւանդեց անցեալ
հինգշաբթի Հաւարտէնի դղեակին մէջ:

Անգլիոյ նախկին նախարարապետին կո-
րուսար չէ որ կոչուան անոնք. այդպիսի սուգ
մը անգլիացիներուն միայն յատուկ կրնար
ըլլալ. կորուստը համախառնային է և այդ-
մահը՝ թախիծով կը լեցնէ իռլանտացիին,
հայուն և յոյին ուրիշը, այդ երեք ազգերը
զորս այնքան կը սիրէր ազատութեան այդ
առաքելալը, ընկճուած ազգերու այդ պաշտ-
պանը, այդ վեհանձն և անկողմնակալ հո-
գին, այդ մեծ մարդը:

Արդի քաղաքակրթութեան նահատակ-
ները և եւրոպական տիրանուագ քոնսէրն
զոհերը երախտագիտութեամբ և ակնածա-
նօք պիտի յիշեն ազատականներու սրտին՝
Հաւարտէնի դղեակաւորին անունը:

* * *

Անգլիոյ ժամանակակից պատմութեան
մէջ մեծ էջ մը պիտի գրուէ կլատաթընի
կեանքը:

Հնդկաստանի մէջ հարստացած վաճա-
ռականի մը որդի, կլատաթըն իր տաղանդով
և աշխատութեամբ նշանաւոր դիւանագետի,
բանաստեղծի և ելմագետի համբաւ մը վա-
յելեց իրաւամբ:

Բան երեք տարեկան եղած ատեն հա-
սարակայ խորհրդարանին մէջ իր Լորդ ու-
նեցաւ և 1862ին Լորտ Բալմֆրէթին յա-
ջորդեց, իբրեւ պետ ազատականներու:

Իր դիւանագիտական բանալիօտութիւն-
ներով ունկնդիրները պարզապէս կը հմայէր
իր ճարտասանութեամբ, ուղիղ տրամաբա-
նութեամբ, և ազգու հեզնաբանութիւնովը:

Որքան դիւանագետ նոյնքան ալ դրա-
գետ էր կլատաթըն որ ինքզինքը գրականու-

թեան կուտար, ամեն անգամ որ կը քաշուէր
քաղաքագիտական աշխարհէն:

Հաւարտէնի դղեակին մէջ առանձնա-
ցած, իր դիւանոր զբաղումն էր չարչարող
ազգերու բարօրութեան համար աշխատիլ
լուիկ մնչիկ: Իր պաշտպանածը ազատութեան,
արդարութեան դատն էր: Նաքօլի թագա-
ւորութեան անկախութիւնը իր անդրանիկ
գործն է: Նոյնպէս յունական կղզիներու Յու-
նաստանի տրուիլը իր աշխատութեան ար-
դիւնքն է:

Անշուշտ դեռ ամեն հայու սրտին մէջ
արձանագրուած է իր պերճախօս ձայնին ար-
ձագանգը, երբ կատարուած ջարդերու միջո-
ցին եւրոպական տէրութիւններու անտարբե-
րութեան դէմ կը բողոքէր և անոնց ուշադ-
րութիւնները և պաշտպանութիւնը կը հրաւի-
րէր այդ ջախջախուած ազգին վրայ: Թէև
որ և է արդիւնք մը չունեցան իր ճիգերը և
ճառերը, սակայն պէտք է միշտ անհուն ե-
րախտագիտութեամբ յիշել այդ մեծ մար-
դուն անունը, որովհետեւ ամբողջ Եւրոպայի
մէջ մինակ ինքը գտնուեցաւ որ զգաց մեր
դժբաղդութեան անհունութիւնը և մեղի
վշտակից ըլլալով, մեր ցաւերը ամօքել փոր-
ձեց իր յուսալի խօսքերով:

Կենսագրութիւն մը ընելէ աւելի, երախ-
տագետ զգացումնիս բացատրած ըլլալու
փափագն է որ մղած է զմեզ այս սուղերը նուի-
րելու իր անմահանալի յիշատակին:

ԳԱՏԵՐԱԶՄԸ

Մանիլայի և Բալիթէյի միակ ծովա-
մարտէն ի վեր օրերը օրերուն, շաբաթները
շաբաթներուն կը յաջորդեն և նոր բաղխումի
մը լուրը չենք տակալին հեռագիրը: Տար-
օրինակ զուգադիպութիւնով մը անոնք որ
ամենէն աւելի կ'այլաճէին պատերազմը,
հիմա ամենէն աւելի անհամբեր ցոյցերը կ'ը-
նեն այս կէս խաղաղասիրական պատերազմի
դրութեան շարունակութիւնը տեսնալով: Ու
իրաւացի է իրանց բողոքը, որովհետեւ գործին
այս ձգձգումը ոչ միայն աղիտաբեր է Ամե-
րիկայի և Սպանիոյ, հապա ամբողջ աշխարհի
Համովուելու համար աչքերովնիս տեսնեք
անոր տխուր հակազդեցութիւնը, դրական
և արիւնոտ եղելութիւններով:

Հանելուկ մը մեղի համար, իրաց այս
վիճակը: Ամերիկայի համար կարելի է դարձ-

եալ ենթադրել թէ իր թշնամին նիւթապէս փճացնել ուզէ՝ պատերազմը երկարաձգելով՝ մինչդեռ միեւնոյն ժամանակ ատիկա պիտի նպաստէ իր ցամաքային զօրութիւնը կազմակերպելու։ Միւս կողմէ Ամերիկա երկար ատեն կարող է գիմանալ պատերազմին ծախքերուն։

Բայց ինչ որ անհասկանալի կը մնայ, Սպանիոյ ձեռք առած նմանօրինակ ռազմական-ռազմութիւնն է։ Նաւատորմ՝ մը Բատիչէէ Մարթինիք երթալու համար 12 օր կը սպառէ։ Ուրիշներ անդործ կը սպասեն։ Անբացատրելի կը մնայ երկու կողմէ ցոյց տրուած այս դանդաղութեան պատճառը։

Քանի մը օրեր է ի վեր ժամերով կարելի է չտեսնել երկու հակառակորդ նաւատորմիկները իրարմէ բաժնող հեռաւորութիւնը ու վճռական դործողութեան մը լուրը կուշանայ տակաւին գալու։

Ամէն պարագայի մէջ սակայն ձգձգու մը իր maximumին հասած է ալ. մահացու հարուածները պիտի սկսին. բան մը որ անստուգութենէ աւելի լաւ է ապահովար։

Ահաւասիկ չորեքաբքի օրուրն ի վեր սացուած հեռագիրներն ու տեղեկութիւնները։

Ամերիկեան նաւ մը, որ Բարտոնասի նաւահանգստին մօտերը գրուած թօրփիւնները կտրել վերցնելու կ'աշխատէր, պայթելով օդը ելած է։ 17 հոգի մեռած են։

—Սպանիացի Ռոտրիկէզ զօրավարը յաղթութիւն մը տարած է քուպացի ապստամբներուն վրայ Բարնէնի հովիտներուն մէջ։ Կրտուի թէ 200 ապստամբներ սպաննուած են այդ կռուին մէջ։

—Ամերիկայի նաւային և զինուորական իշխանութիւնները կը պնդեն ընդծովեայ պարանները կտրուելու հարկին վրայ, որովհետեւ Պլանքո՝ զօրավարը ատոնցմով է որ կը հաղորդակցի Մատրիտի և Մէրիլէրա ծովակալին հետ։ Այդ ընդծովեայ հեռագրական պարանները մեծ մասով անգլիական են։

—Միացեալ Նահանգներու մէջ հաստատուած խիստ գրաքննութեան պատճառով, պատերազմին վրայ վստահութեան արժանի լուրեր ստանալը շատ դժուարացած է։

—Սպանիական նաւատորմի մը կազմակերպուած է Բատիչէի մէջ, որ կը բաղկանայ զրահաւորէ մը, 7 յածաւորակէ և 3 թօրփիւնաւէ։

Կը կարծուի թէ այդ նաւատորմը Ֆիլիպին կղզիները պիտի ուղեւորի ամառային վերջերը 11,000 զինուորով։

—Մարիտի մէջ լուր կը պատի որ սպանիական նաւատորմը Հավանա մտած է։

—Ֆիլիպին կղզիներու ապստամբները կը պատրաստուին Մանիլայի վրայ յարձակիլ։

—Միացեալ Նահանգներու նաւապետ Պ. Մաք Քիլէյ 70,000 կամաւորներ զէնքի կոչած է։ Այդպէսով բանակը 270,000 հոգիէ բաղկացած պիտի ըլլայ։

—Բարիդէ պաշտօնապէս կը հերքուի այն լուրը՝ որու համեմատ որպէս թէ բանակցութիւններ սկսած էին Սպանիոյ և Ֆրանսիայի միջեւ ֆիլիպինները այս վերջնոյն ծախքով համար։

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Մասիսի Աղեքսանդրիայէն ստացած մէկ թղթակցութենէն հետեւեալ շահեկան մասը կը քաղենք։

Մէհմետ Ալին ի վեր հաստատուած առանդութեան հետեւեալ, մեր առաջնորդն ալ՝ —երբ առաջնորդ ունենանք, — տաք եղանակին վեց ամիսները Աղեքսանդրիա կ'անցնէ։ Բայց եկու տես որ երկար ատենէ ի վեր առաջնորդ չունինք, և տեղն է բռնու որ հովիւէ զրկուած՝ հօտը ցրուած է։ Հետեւեալները ամեն տեսակով ազդեալութեամբ են անանկ ատեն մը՝ որ հայ ընտելիները բազմացած ըլլալով, ամէն ժամանակէ աւելի խմատուն հովիւի մը պէտք ունենին։

Զարտի ուզէի պատասխանատուութիւնները փնտել այս կայութեան՝ որուն պատճառն է թէ՛ Գահիրէի և թէ՛ Աղեքսանդրիոյ մեր հասարակութեան պետերուն յանձնարարատունութիւնը։ Հոգեւոր պետի մը բացակայութենէն խորախուսած, անոնք հաճոյք կը զգան առաջնորդին տեղը բռնելով, ու մեր հոգիներուն հետ հասարակութեան ալ զօրները վարելով։ Եւ առժամանակեայ պաշտօնը զոր կը վարեն, այնչա՛ր հեշտ կուգայ իրենց որ իրական հաճոյք մը կը զգան անոր տեղութիւնը երկարելով։ Այսպէս է որ հանրային կարծիքին ճնշման տեղի տալով, հատարուած են առաջնորդ մը ընտրելու համար, և ընտրած ալ են Յովսէփ Մ. Վ. Ալփաբեանը՝ մինչդեռ շատ ազելի զիտէին որ այս յարգելի եկեղեցականը Ռոտտոֆոյն առաջնորդ ընտրուած, և գացած պաշտօնին ալ ձեռնարկած էր, ինչպէս որ կը տեղականներ վերջին թղթաբերի Մասիսէն։ Այս միջոցիս կատարութեան քով առանց օրինաւոր ներկայացուցչի կը մնանք, ու կղերը, դպրոցները և հասարակութեան գործերն ալ հսկողութենէ զուրկ։ Բայց ի՞նչ օգուտ ունի առաջնորդի մը հսկողութիւնը, երբ առաջնորդ անոր տեղը կը բռնեն այնքա՛ն չափաւոր կերպով։ Մասնաւոր թէ առաջնորդի մը ներկայութիւնը ամենական տարւոյն կարծէ Գահիրէի և մասը ոսկի ալ Աղեքսանդրիոյ։ Իրոյց արդէ վիճակին կուսակիցներուն առարկութիւնն է ասիկա։

Այս շփոթ վիճակը՝ որ բաժն տարիէ ի վեր կը տեսնէ, իսկած է մեր յարաբերութիւնները Հապէշի թանի հետ՝ որուն Եգիպտոսի եկեղեցական ներկայացուցչին էր մեր առաջնորդը, միայն որ Հապէշի թանի ունի օտար երկրի մը մէջ։

Ասոր համար է որ զպրոցին մէջ, աշխարհաբարութեան դասին մեղի կը սորվեցնեն թէ Հապէշները լուսաւորչական են։

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

ՓԱՐՈՍԻ ԴԱՂԱՐՈՒՄԸ !

Եգիպտոսի հայերուն համար օրուան են կարեւոր դէպքը ապահովապէս Փարոսի դարձումն է։ Ամեն մարդ իր ուզած կերպով կը մեկնէ այդ ինքն իրողութիւնը։

Կողմէ՛ մեկի ընել։
Տեղապահը. — Է՛յ ճանջմ, երկան կրեւր կոր. . . :

Բաղադրական ժողովի անդամները, — Ո՛ւ՛՛, . . . աղիք ալ ազատեցանք։

Հայոց սրճարանի կառնօնները. — Հեյն խաղաղեցանք, յորս հարիւր հոգիի մէկ Փարոս կը հասցնենք կոր, խօլա՛յ է։

Կիները. — Իրա՛ւ է. չեղա՛ւր կոր. . . մեղի։

Երիտասարդները. — Եգիպտոսի հայերուն համար ամօք է որ քերք մը չեն կրուար կոր ապրեցնել։ (Թե՛ւ իրենք ճիշդ կը կարդային քերքը)։

Առաջնորդարանի բարապանը. — Հե՛ստ կիչնան մի, իշթէ սօնեւրնին առանկ կըղալ, օ՛խ։

Մեր թշնամիները. — (Ո՞վ գիտէ ի՞նչ կրտեն այս պահուս)։

Նշանած աղջիկները. — Գունէ միկնել առջի պսակ հաւրերէին։

Փաշաները. — Est-ce-qu'il y avait un journal ici ?

Տ. Կարապետ հայրը. — Անտա՛ւի։

Առնելիք ունեցող բաժանորդները. — Է՛յ մեր փարանէ՛ր։

Տալիք ունեցող բաժանորդները. — Է՛ժեն-սիւմ, քոյ շարունակեմ։

Փարոսի պաշտօնեաները. — Գեշ աղէկ տարի մը ապրեցանք, բայց մեղի մեր սնօրեմին usականում։

Յուստեանները. — Մենք առջի օրէն գիտէինք։

Լաւատեսները. — Կարելի թան չէ որ վնաս ըրած ըլլայ։

Տեղացին. — Մալէ՛շ։

Գաղթականը. — Մեր վերջին միսիքարոսիւնը կանկեւսանայ կոր։

Զարգացեալները. — Խե՛ղճ Փարոս։

Անոնք ո՛ր չեն. — Խաղէթան ալ պանքս ըլլա՛ւ։

Մեր բարեկամահները. — Երկու հարիւր ոսկի եւս վնասեցէ՛ք ի՞նչ կըղայ։ Առանց Փարոսի ի՞նչ պիտի ընենք։

Գործի մարդը. — Ախպար, մեղի ես. ուրիշ գործ մայէ, Եգիպտոս ու՛ր ըրա՞րուք ինչ ու՛ր։

Արտասահմանի թերթերը. — Քիչ մը սպասելու է տեսնելու. համար քէ ինչ պիտի ընեն։

Աղեքսանդրիացի. — Ի՞նչ, 32 հաս բաժանորդ ունեն հոս, չե՛ր բաւեր։

Իրաւէիները. — Փարոսի տնօրէնը զորպանէն 100 ոսկի տուաւ տարի մը շարունակելու համար։ Նորէն սկսիլը պարզապէս յիշարութիւն է։

Տնօրէնը. — Հաւատացե՛ք որ ինքն ալ չգիտէ ինչ ըսելիք։

ՌՍՏՄԼՍ

ՏԵՂԱԿԱՆ

Նախարարաց խորհուրդը պիտի գումարուի այսօր Բասէլ-Թիւրի պալատին մէջ Մուսթաֆա Ֆէհմի փաշայի նախագահութեամբ։

—Ի դիմաց Եգիպտոսի յոյն գաղթականութեան Պ. Ալէքսանդրիայի պաշտօնէին հեռագիր մը զրկած է Տիւրքի կառավարէին։

—Իռէնա Փուստ փաշա բաւական ապաքինած ըլլալով, կարելի եղաւ փոխադրել զինքը Իզմիթ պէյի ապարանքը ուր մասնաւոր սենեակներ իր տրամադրութեան տակ դրուեցան։

—Անցած երեքշաբթի առտու ժամը 8ին շատ փայլուն կերպով տեղի ունեցաւ անգլիական տարեկան զօրահանգէսը Ապտինի հրապարակին վրայ, Անգլիոյ թագուհւոյն տաւրեարձին ու թիւ։

—Կատարած շուններու ծաւալման առաջը առնելու համար Առողջապահական վարչութիւնը նոր օրէնք մը հրատարակելու վրայ է, որու համեմատ ամեն շունի տիրոջմէ տարեկան 50 դրուչի տուրք մը պիտի առնուի։ Աղկից դատ ամէն շուն իր անուրին վրայ թիւ մը և տիրոջը անունը պիտի ունենայ ու պիտի արգիլուի առանց սպասաւորի անոնց փողոց ձգուիլը։

